ՄՈՎՍԵՍ ԳՈՐԳԻՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Բարև Ձեզ, սիրելի հայրենակիցներ: Ես ,,Ազգային Ինքնորոշում Միավորման,, ներկայացուցիչ եմ, անունս Մովսես Գորգիսյան: Ես այսօր մի քանի կարգախոսներ հրապարակելով ուզում եմ ուղղակի զրույցի բռնվել ձեզ հետ: Խոսելուս նպատակը հետևյալն է. արտահայտել անձամբ իմ և կարծում եմ, միավորման կարծիքը:

Պարոնայք, տիկնայք, մենք կանգնած ենք ճակատագրական պահի, ճակատագրական անցման եզրին, և ես խնդրում եմ, թող այստեղից չհնչի ,,ընկերներ,, արտահայտությունը: Մենք խոսենք հայեցի, հայավարի, հայերեն՝ մեր հայկական բառերով, որովհետև հնարավոր է, որ շուտով մենք ունենանք մեր Հայկական պետականությունը, և այնտեղ կեղտոտ ձեռքերով, գործերով ու խառնածին լեզվական մտածողությամբ չմտնենք: Ես ուզում եմ ճշտել մեր տեսակետները ազգիս հավաքականության հետ: Ի՞նչ է նշանակում այսօրվա իրավիճակը, ի՞նչ է կատարվել մինչև այսօր և ի՞նչ պետք է կատարվի: Նախ. մենք բազմիցս հավաքվել ենք կարելի է ասել Անկախության հրապարակում, որովհետև մենք այստեղ անկախ ենք, գործում ենք անկախ որևէ կառավարությունից, որևէ իշխանությունից, որևէ ճնշումից՝ անկախ ու ազատ ոգով և այս անկախության հրապարակում մենք բազմիցս խոսել ենք, բայց երբեմն հանգել ենք ջրապտույտների և առաջ չենք գնացել: Այս խոսափողից, ես առաջարկում եմ, պետք է խոսեն միմիայն այն մարդիկ, ովքեր գործնական առաջարկություններ ունեն: Ոչ ոք թող չպատմի իրավիճակը: Պետք է ընդունել հետևյալը. իրավիճակը ողբերգական է, ստրկական, և այդպես էլ պիտի լիներ: Ոչ մի մանրամասն նկարագրություններ մեզ պետք չեն, որոնք մեր այս մեծ շարժումը կարող են շեղել մանրակրկիտ ինչ-որ փոքր հարցերում, մըտցընել տիղմերի մեջ և այլ ուղղություններ տալ: Որոշակի առաջարկություններ: Առաջարկություն 1-ին. մենք պիտի խոսենք Աստված, Հայրենիք, Ազգ: Ուրիշ՝ ոչինչ:

Մենք պետք է այստեղից սկսենք: Ոչ թե խոսենք սոցիալիզմի կամ կոմունիզմի սխալներից, խոսենք, որ կուսակցությունը այսպես կմտածի, կամ ղեկավարությունը այնպես, որոնք մեզ խորթ մտածողություններ են, այլ խոսենք ազգից և ընդունենք, որ մենք կուսակցությամբ և ամեն ինչով հայ ենք, հայ և հայավարի ենք մտածում: Աստված. Հայրենիք, Ազգ:

Երկրորդ. Այսօրվա նստաշրջանի պահանջի մասին:

Մենք ամիսներ առաջ կանգնեցինք այստեղ և պահանջեցինք նստա-

շրջան: Այսօր մոռացել ենք դրա արդյունքը, մոռացել ենք, որ հաղթահարել ենք այն և հասել ենք Գերազույն Խորհրդի /ԽՍՀՄ/ նստաշրջանին, այն ևս իր պատասխանը տվեց: Այսօր նորից վերադարձել ենք առաջին մի փոքր քայլի և պահանջում ենք նորից նստաշրջան: Ինչու՞: Չէ որ մենք այստեղ կառավարությանը անվստահության քվե տվեցինք, քանի որ նրանք դրածոներ են Մոսկվայի, և քանի որ միակ կառավարությունը այսօր կարող է լինել ժողովրդական ՏՐԻԲՈՒՆԸ՝ կազմկոմիտեն, հանձինս որոնց տեսնում ենք ժողովրդի ներկայացուցիչներին: Մոսկվայի դրածոները Հայաստան չեն կարող ղեկավարել: Նրանք թշնամական շտաբ են իրենցից ներկայացնում /ժողովուրդ - Ճիշտ է/: Այո, եթե ճիշտ է, ուրեմն մի հարց. ինչու՞ ենք խնդրում կամ պահանջում, որ թշնամական շտաբում ի օգուտ մեզ որևէ հարց շոշափվի: Այդպիսի բան հնարավո՞ր է, թե՝ ոչ: Ես չեմ ուզում ասել, որ մենք Մոսկվային ընդունել կամ ընդունում ենք որպես թշնամի: Այդ նրանք թույլ տվեցին թշնամական դիրքորոշում, որի մասին կանխավ հայտարարում էր ,,Ինքնորոշում Միավորումը,, , բայց հարկ կար, որ իրենք իսկ ապացուցեին իրենց թշնամի զտնվելը հայ ժողովրդի նկատմամբ: Առաջինը Մոսկվան է... մեր անդառնալի թշնամին... որովհետև պատմությունը երբեք լուսավոր կետ չի տվել, որ կարող է այդ շտաբը երբևէ վերածվի Հայաստանին օգտակար շտաբի կամ որևէ հարցի լրական լուծում տալ: Երկրորդը Հայաստանի ղեկավարությունն է, որը դրածոն է Մոսկվայի, և նա ի օգուտ մեզ հարց չի լուծի: Այսինքն՝ նա ենթաշտաբն է մեր թշնամի շտաբի: Բայց այստեղ ելք կա... օրինակ, Ղարաբաղի կառավարությունը ժողովրդականացավ: Թշնամական շտաբ չի կարող համարվել Ղարաբաղի նստաշրջանը: Այն իր կապը Մոսկվայի հետ իրականացնում էր Ադրբեջանի միջոցով: Այժմ նրանք կտրելով Ադրբեջանի հետ կապը՝ մնացին անկախ, ազգային: Երևանի, Հայաստանի կառավարությունը անմիջապես կապված է Մոսկվայի հետ: Եթե այն երբևէ ազգայնանա, ուրեմն՝ մենք չպետք է զնանք նստաշրջան պահանջենք: Նրանք եթե հարցեր ունեն, իրենք պիտի զան այստեղ՝ մեզ մոտ: Երբեք մենք իրավունք չունենք ոչ Խորհրդային Միության Գերազույն Խորհրդից և ոչ էլ Հայաստանի Գերազույն Խորհրդից որևէ բան խնդրել, կանխավ իմանալով, որ դա մերժման է ենթակա, որովհետև յուրաքանչյուր լուծում տրվում է Մոսկվայից և լուծվում է այստեղ՝ ի օգուտ Մոսկվայի: Իսկ Մոսկվայի շահերը, բոլորիս հայտնի է, հակասում են մեր ազգային շահերին: Սա երկրորդ.

Խնդրում եմ ուրեմն Ճշտել դիրքորոշումը:

Սիրելիներս, հայրենակիցներ, մենք գալիս ենք այստեղ կանգնում, ինչ որ քաներ որոշում /տանջակ օրեր, ամիսներ/, բայց քայլ չկա, առաջխաղացում չկա, որովհետև վերադառնում ենք նորից նստաշրջանների, որովհետև մոռանում ենք փետրվար ամսվա վեհաշունչ օրերը, երբ այստեղ ,,Լենին,, , ,,Պարտիա,, , ,,Գորբաչով,, կոչերի վրա խաչ քաշեցինք, մի մեծ քայլ առաջ գնացինք և հիմա, նորից, նստ ենք դառնում ,,Գլասնոստ,,-ին ու ,,Պերեստրոյկա,,-ին: Այստեղ ակամա բարդ խնդիրներ են լուծվում: Այս մեծ, աղմկոտ շարժման մեջ մենք մեր ազգային խնդիրներն ու շահերն ունենք: Սա ազգային-ազատագրական շարժում է: Կլինեն մարդիկ, որոնք կառաջարկեն այս ազատագրական շարժման մեջ որևէ քայլ կատարել դեպի առաջ: Այդ առաջարկությունների վերլուծումը տրված է միմիայն ձեզ՝ ժողովրդին: Ոչ ոք իրավունք չունի մենաշնորհ ունենալ որևէ վճիռ կայացնելու: Կազմկոմիտե նշանակում է կազմակերպչական կոմիտե: Դուք զոռում եք միլիոնով այստեղ..... բղավելով գործադուլ: Գործադուլ չեղավ: Հարցնում եմ՝ ինչու՞, որովհետև կազմկոմիտեն չհայտարարեց: Կազմկոմիտեն չի հայտարարի: Կազմկոմիտեն կազմակերպում է Ձեր որոշումները: Ազգն ինքնորոշված է արդեն: Սա է ազգային ինքնորոշումը: Այսօր պետք է կանգնի ազգը միահամուռ և ինքը պարտադրի իր կարծիքը բոլոր կոմիտեներին և բոլոր կազմակերպություններին, բոլոր իշխանություններին: Սա է ամենամեծ իշխանությունը: Ուրեմն՝ յուրաքանչյուր կարծիք պիտի հաշվի առնվի բարձրախոսից...: Բայց այս կետը պարտադիր է, որովհետև ժողովուրդը պետք է պարտադրի բոլոր կուսակցություններին, բոլոր կոմիտեներին և բոլոր իշխանություններին: Վերջին խոսքը տրվում է ժողովրդին: Բոլոր առաջարկությունները.....

Հիմա ես առաջարկության եմ անցնում. այսօրվա անելիքների մասին: Նոմիտեն մի քանի անգամ այս շարժման զազաթնակետին հասնելով, անընդհատ շեշտում է 2 խնդիր. մեկը Ազգերի ինքնորոշման իրավունքն է, մյուսը՝ ՀԽՍՀ սահմանադրության 72 հոդվածը: Դա այն հոդվածն է, որտեղ հստակ կերպով ասվում է, որ յուրաքանչյուր հանրապետության իրավունք է վերապահվում դուրս գալու ԽՍՀՄ կազմից: Խոսքը Հայաստանի, ընդհանրապես հանրապետությունների, անկախացման իրավունքի մասին է՝ հանրաքվեի կամ իրենց նստաշրջանի միջոցով: Ի՞նչ տարբերություն ինքնորոշման 70 և 72 հոդվածների միջև: Մենք, երբ այստեղ փետրվարին առաջին անգամ կանգնեցինք գործադուլների և ցույցերի, չգիտեինք, որ Արցախահայությունը ինքնորոշվել է և վախենում էինք նույնիսկ ինքնորոշում բառից: Այսօր բոլորս հստակ գիտենք. ինքնո-

րոշումը դա 70-րդ կետն է, և Արցախահայությունը ինքնորոշվել է, որը ապօրինաբար չի հաստատում ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը:

Հիմա մենք պետք է պահանջենք 72-րդ կետի իրականացում... Մենք նախապես հայտարարել ենք, որ Մոսկվան չի լուծել և չի լուծելու Արցախի և մեր բոլոր խնդիրները, որովհետև ինքն է այն ստեղծել: Մենք պահանջում ենք ,,Օղանավակայանի,, դատ: Մարդասպանը ինքը իրեն չի դատի, հավատացեք... Մենք պիտի դատենք, մենք պիտի անենք, մենք պիտի մեր խնդիրները լուծենք: Ուրեմն մեզ հստակ հայտնի է. Հայաստանի Գերագույն խորհուրդը խնդիր չի կարող լուծել, Մոսկվայի Գերագույն խորհուրդը չի լուծի: Ո՞վ է խնդիրը լուծելու: Ի սկզբանե ասում ենք. ,,Մենք՝ ինքներս,,: Բայց մենք ունենք մեկ քայլ ևս: Դա համաշխարհային հասարակայնությունն է: Այսօր Ղարաբաղ կոմիտեն այդ մասին ասաց: Նա միշտ ասում է, որ մենք դեռ ունենք, այսպես ասած, պահեստային հողված: Դա 72-րդ հոդվածն է՝ անկախացման, և դրանով մատ ենք թափ տալիս Մոսկվային: Դրանով ասում ենք, որ մենք կը-դիմենք ՄԱԿ: Այո, այսօր ճակատագրական այն պահն է, որ ազգը պիտի որոշի՝ Նորի՞ց հետադարձ փետրվարյան օրերից առաջ, այսինքն՝ ամբողջ թռիչքները, այս ամբողջ հաղթահարումները նո՞րից մոռանանք և նո՞րից սկսենք ԽՍՀՄ, ՀԽՍՀ Գերագույն խորհուրդներ և դիմումներ, թե՝ արդեն հարցը դնենք համաշխարհային մակարդակով և ասենք, որ այսպես է մեր վիճակը: Երբեմն ասում ենք ինչու՞, որևէ մեկը ինչու՞ չի միջամտում: Պարոնայք, եթե իմ ընկերը հիվանդ է, ես մոտենում հարցնում եմ. ,,ի՞նչ է, ինչպե՞ս ես,,: Նա ինձ ասում է՝,,ոչինչ,,: Ուրեմն հետագայում իմ անտեղյակության համար նա ինձ չի կարող մեղադրել: Մենք վախեցել ենք ասել, որ մենք վատ ենք, որ մեռնում ենք, որ մեզ սպանում են, որ սրիկաներով ենք շրջապատված, որ մեր պատմության մեջ հայտնված կարմիր օղակը խեղդում է մեզ, որ սա Եղեռն է, և շուտով կենդանի-կենդանի մեզ խեղդելու են այս զազախցի մեջ, Սումգայիթների, օղանավակայանների մեջ, խեղդելու են մի ողջ ազգի իր իսկ ա[illegible]յան մեջ: Այո... Մեր շահերը երբեք չեն համընկել: Ուրեմն բաց ճակատով կենաց-մահու կռիվ է պետք տալ: Այս ամբողջ ընթացքը միայն նրա համար է, որպեսզի մենք գիտակցության գանք և հասկանանք, որ մեզանից բացի մեր մասին ոչ ոք չի հոգա, որ մենք պիտի լուծենք մեր հարցերը և ոգորմություն չսպասենք ուրիշներից: Այսօր մեզ մնացել է մի քայլ ևս՝ դիմել համաշխարհային հասարակայնությանը: Եթե կան մարդիկ, որոնք կասեն, որ դա սխալ է կամ ճիշտ է, ես համամիտ եմ երկուսի հետ էլ

որովհետև այն կարող է պաշտպանել մեզ և կարող է չպաշտպանել: Այսինքն՝ ՄԱԿ-ում կարող է լինել և Գերագույն խորհրդի նախագահության նիստի պես մի խեղկատակություն և կարող է լինեն շատ իրական, այսպես ասած մարդասիրական մի մոտեցում մեր ազգի նկատմամբ: Երկու դեպքն էլ հնարավոր է: Բայց ենթադրությունները դրանք ծայներ չեն: Մենք այսօր հասել ենք որոշակի մակարդակի ծայների միջոցով: Եվ ասեկոսները, խոսակցությունները դրանք հիմք չեն: Հիմքը դա քայլն է: Մենք պիտի դիմենք Ազգերի Միությանը, ամբողջ աշխարհին, որպեսզի իմանանք, ովքեր են մեզ հետ և մեզ դեմ: Որից հետո կորոշենք արդեն հաջորդ քայլը: Ուրեմն մնում է քվեարկել այս հարցը, մեր ազգային հարցը, որը մինչ այսօր ներքին հարց է համարվել: Մեր իրավունքները բռնաբարվել են, որովհետև մեզ օգտագործել են որպես տան մեջ եղած իր: Հարևանը չի կարող ներխուժել իմ տուն և ասել. ,,աթոռն այստեղից այնտեղ մի դիր,, , որովհետև մեր հարցը, որպես աթոռ, Խորհրդային Միությունը օգտագործում է, և երբեք այդ հարցին չէր կարող միջամտել որևէ պետություն: Հիմա խնդիրն այսպիսին է: Ինչպես մենք կարող ենք հարցը բարձրացնել միջազգային ասպարեզ: Սահմանադրության 72-րդ հոդվածը դա համաշխարհային հարց է և մեր անկախացմանը պետք է աջակցի ամբողջ աշխարհը: Դա աթոռի հարց չէ, դա կահույքի տեղափոխության հարց չէ մի տեղից մյուս տեղը Խորհրդային Միության կազմում: Երբ որ հարցը դրվում է Խորհրդային Միության կազմից դուրս գալու, այստեղ ինքնաբերաբար անմիջապես Միացյալ Ազգերի Կազմակերպությունը և ամբողջ աշխարհը, որին որ ցանկություն կունենանք դիմելու, իրավունք կունենան միջամտել մեր ներքին կոչված գործերին: 72-րդ հոդվածը ներքին չէ: Այդ դեպքում Գերագույն խորհուրդն, անգամ ԽՍՀՄ ուժերը չեն կարող արգելք հանդիսանալ և ասել, թե դա իմ ներքին գործն է: Սա միանգամից երկու հարված է: Նախ կմշտվի աշխարհի տրամադրությունը և աշխարհի ծայները մեր նկատմամբ, որը մինչև այսօր չենք արել: Եվ երկրորդը՝ մենք հնարավորություն ենք ստանում, ինքներս լուծելու մեր խնդիրները: Ոչ Ղարաբաղյան կոմիտեն, ոչ կոմունիստական կուսակցությունը, ոչ ինքնորոշում միավորումը, ոչ որևէ խմբավորում, ոչ էլ Մոսկվան, իրավունք չունի հանդես գալու ազգի անունից և ասելու. ,,Դուք չեք ուզում ինքնորոշվել, անկախանալ կամ ուզում եք,,: Մենք իրավունք չունենք ասելու. ,,Դուք ուզում եք,,: Մենք ասում ենք. ,,Մենք ենք ուզում, ես եմ ուզում, դուք՝ ինչպե՞ս,,: Ամենաիսկական իշխանությունը, ազգային, ժողովրդական իշխանության արդարացի ծայնը համամի՞տ է ԽՍՀՄ կազմից դուրս գալուն, թե՝ ոչ: Որպեսզի պարզվի ազգն ուզում է ազատ, անկախ ապրել, պիտի դրվի հանրաքվեի հարց: Առաջիկա միակ քայլը՝ /որպեսզի չընկճվենք, չխճճվենք մեր քայլերի մեջ/ առաջխաղացման երրորդ քայլը դա հանրաքվեն է, որպեսզի մեր հարցը անմիջապես դրվի միջազգային ասպարեզ: Համամի՞տ եք հանրաքվեի /ժողովուրդ - այո, այո.../: Ես ցնծում եմ, որպեսզի սխալմունքներ չլինեն, ոչ թե նախորդ 70 հոդվածի ինքնորոշման հանրաքվեի մասին, որը կարող են շատ հանգիստ խեղդել և բռնաբարել այս պետության ներսում, այլ խոսում եմ 72-րդ հոդվածի ինքնորոշման հանրաքվեի մասին: Այսինքն, մենք պետք է ցնծենք՝ մեր ազգը համամի՞տ է անկախության, թե՝ ոչ: Հանրաքվե ուզու՞մ եք /ժողովուրդ - այո.../: Ան-կա-խու-թյուն: Ամփոփում եմ: Մեր առաջարկած միակ քայլը հանրաքվեն է, որպեսզի մենք կարողանանք մեր կարծիքը առաջ քաշել միջազգային ասպարեզ:

Շնորհակալ եմ: